ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N «ԵՔ-ԲՄԾՁԲ-18/9»

ք.Երևան «28» դեկտեմբերի 2017թ.

Երևանի քաղաքապետարանը, ի դեմս աշխատակազմի գնումների վարչության պետ Գ. Ջերյանի, որը գործում է Երևանի քաղաքապետի 01.04.2015 թվականի թիվ 956-Ա որոշման հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «Ջրային կառույցների» ՓԲԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Ա. Տեր-Թովմասյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է Երևան քաղաքի ջրային կառույցների շահագործման և պահպանման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տույժերը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 ՊԱՏՎԻՐԱՏՈՒՆ ՊԱՐՏԱՎՈՐ Է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 ԿԱՏԱՐՈՂՆ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԻ՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 ԿԱՏԱՐՈՂԸ ՊԱՐՏԱՎՈՐ Է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով` նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված` ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 2.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «էլեկտրոնային գնումներ» բաժնում)` նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 2): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ` լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 15 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 325490000 (երեք հարյուր քսանհինգ միլիոն չորս հարյուր իննսուն հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն` 54248333 (հիսունչորս միլիոն երկու հարյուր քառասունութ հազար երեք հարյուր երեսուներեք) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը` այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ` դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա` պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

4.3 2018 թվականի դեկտեմբեր ամսին մատուցված ծառայության դիմաց դրամական միջոցների փոխանցումը կատարվում է միանվագ կարգով, որպես կանխավճար, մինչև 2018 թվականի դեկտեմբերի 25-ը, որը մարվում է հանձնման-ընդունման արձանագրությամբ` մինչև 2019 թվականի հունվար ամսվա 10-րդ աշխատանքային օրը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում

կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի  կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը` Կատարողի առաջարկության առկայության դեպքում` պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան  պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողությունները) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի` երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները` ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ` բացառությամբ` Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի` պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում` նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված` ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է 4 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2 և N 2.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.13 Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի յոթնապատիկը, ապա Պատվիրատուի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Կատարողի կողմից տուժանքի ձևով ներկայացված պայմանագրի ապահովումը` նախատեսված ֆինանսական միջոցների չափով, փոխարինվում է բանկային երաշխիքով կամ կանխիկ փողով` հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 18-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջները: Ընդ որում, Կատարողը համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված պայմանագրի ապահովման փոխարինման դեպքում նաև նոր ապահովումը Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

7.14 Սույն պայմանագրով նախատեսված Պատվիրատուի իրավունքներն ու պարտականությունները ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով  իրականացնում է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի շինարարության և բարեկարգման վարչությունը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԳՆՈՐԴ
Երևանի քաղաքապետարան
ք. Երևան, Արգիշտիի փ. 1
ՀՎՀՀ 02593108

ԿԱՏԱՐՈՂ
«Ջրային կառույցների» ՓԲԸ
ք. Երևան, Հալաբյան 31/2
«Անելիք բանկ» ՓԲԸ
Հ/Հ 11800205074800
ՀՀՎՀ 00009812

Գ. Զքրյան ------------------------------------
(ստորագրություն)
Կ.Տ

Ա. Տեր-Թովմասյան ------------------------------------
(ստորագրություն)
Կ.Տ.

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

| Հ/Հ | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | տեխնիկական բնութագիրը (յուրաքանչյուր չափաբաժնի համար) | Չ/Մ | ընդհանուր գինը | կատարման հասցեն | կատարման ժամկետը |
|---|---|---|---|---|---|---|
| | 500000000/328 | Երևան քաղաքի ջրային կառույցների շահագործման և պահպանման ծառայությունների<br>Շահագործվելու է թվով 35 ջրային կառույց (շատրվաններ, ջրավազաններ, Երևանյան ջրամբար, 21 բարաժներ Հրազդան գետի վրա, 25,5կմ երկարությամբ գետեր՝ Գետառ, Ջրվեժ, Ողջաբերդ, «Կարապի լիճ» սահադաշտ):<br>2018թ. շատրվանների և ջրավազանների աշխատանքային սեզոնը կսկսվի ապրիլի 7-ից և կավարտվի նոյեմբերի 1-ին: Երևանյան ջրամբարի, գետերի, Հրազդան գետի բարաժների և «Հաղթանակ» զբոսայգու ջրավազանի շահագործումը և սպասարկումը կկատարվի ամբողջ տարվա ընթացքում: «Կարապի լիճ» սահադաշտը շահագործվում է սեզոնային:<br>Շատրվանները և ջրավազանները մաքրվելու, լվացվելու և ախտահանվելու են ամսեկան 4-5 անգամ: Կատարվելու է ամենօրյա քլորացում: Շատրվանների աշխատանքային ժամերը օրեկան նախատեսվում են 2-12ժամ, Հանրապետության հրապարակի գունաերաժշտական շատրվանը՝ 15ժամ:<br>Յուրաքանչյուր շատրվանի աշխատանքային ժամը նախապես համաձայնեցվում է Պատվիրատուի հետ՝ առավելագույնը | դրամ | 325490000 | ըստ ներկայացված ցանկի | Սկիզբը՝ պայմանագիրն ուժի մեջ մտնելու պահից, ավարտը՝ նախընտրելի ժամկետը մինչև 2018թ. դեկտեմբերի 31-ը ներառյալ |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | սահմանելով 12 ժամ: Սեզոնի բացման նախապատրաստական աշխատանքների ժամանակ շատրվանները և ջրավազանները պետք է բերվեն ճարտարապետական տեսքի՝ կատարելով հատակի և պատերի համապատասխան բետոնացման, ներկման, ջրանցույցների և ջրահեռացման խողովակաշարերի վերանորոգման, բարելավման, էլ. սնուցման ապահովման աշխատանքներ<br>**Կատարվելիք ծառայությունների ըստ օբյեկտների՝**<br>1. Հանրապետության հրապարակի գունաերաժշտական շատրվանի աշխատաքային սեզոնն է ապրիլի 7-ից նոյեմբերի 1-ը, աշխատանքային ժամերն են ամեն օր 8.30-ից մինչև 23.00, բացի երեքշաբթի օրերից, որը համարվում է մաքրման, լվացման, պստահանման և տեխնիկական սպասարկման օր: 8.30-ից մինչև 21.00 գործելու են շատրվանի 3 հատվածները, 21.00-ից մինչև 23.00 գործելու է շոու ծրագիրը: Նոյեմբերի 1-ից կատարվելու են կոնսերվացման աշխատանքներ, մինչև նոյեմբերի 10-ը ջրավազանում տեղադրվելու են պոմպերը և լուսամփոփները պահպանող հասուկ ծածկեր, իրականացվելու է պահպանում ամբողջ ձմեռվա ընթացքում: Աշխատանքային և նախապատրաստական սեզոնի ընթացքում շահագործվելու են 1-11կվտ հզորությամբ GRANDFOS մակնիշի 88 խորքային պոմպ, 110 վոլտանոց 178 հատ ջրային լուսամփոփ /paralamp/՝ յուրաքանչյուրը 1կվտ հզորությամբ, CRISTI ֆիրմային 1 պրոյեկտոր, 2հատ հատուկ ծրագրավորված համակարգչային կենտրոն՝ 12հատ ավտոմատիկայի կառավարման վահանակներով, 2 կոմպրեսորով, 12հատ ձայնասփյուռ: Օբյեկտի էլ.սնուցումը կատարվում է 2գիծ ԱՎՎԳ 4x185մմ2 ընդամենը 600գծմ երկարությամբ և 2գիծ ԱՎՎԳ 4x150մմ 2 ընդամենը 300գծմ երկարությամբ մալուխներով: Շատրվանների ընդհանուր հզորությունը կազմում է 600կվտ/ժամ: Պոմպերի և լուսամփոփների սնուցման համար օգտագործվող 3-4ջիղանոց 4մմ2 -10մմ2 տեսակի մալուխների ընդհանուր երկարությունը կազմում է 10000գծմ: Ամբողջ տարվա ընթացքում պետք է կատարվի ամբողջ սարքավորումների պահպանում, ընթացիկ նորոգում, պոմպակայանում պետք է պահպանվի +18°C-ից մինչև +22°C ջերմաստիճան: Ջրավազանի ամբողջ տարածքը կազմում է 2710քմ, որի համար անհրաժեշտ է շուրջօրյա ջրանուցում, որն ապահովվում է մետրոյի «Հանրապետության հրապարակ» կայարանին պատկանող h.9 խորքային պոմպից Դ-200մմ խողովակաշարով: | | | | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | 2. Մետրոյի «Հանրապետության հրապարակ» կայարանի շատրվանների աշխատանքային սեզոնն է ապրիլի 7-ից մինչև նոյեմբերի 1-ը, շաբաթական 1անգամ կատարվում է ջրավազանի հատակի և պատերի լվացում, մաքրում, պխտահանում: Աշխատանքային և նախապատրաստական սեզոնի ընթացքում շահագործվելու են 3հատ ՆԴՎ5 և 1հատ ՆԴՎ3 մակնիշի պոմպ, 3հատ 45կվտ-անոց, 1հատ 55կվտ-անոց և 1հատ 25կվտ-անոց շարժիչ: Շատրվանների ընդհանուր հզորությունը կազմում է 55կվտ/ժամ, էլ.սնուցումն ապահովվում է 2գիծ ԱՎՎԳ 4x120մմ2 400գծմ ընդհանուր երկարությամբ մալուխով: Ամբողջ տարվա ընթացքում պետք է կատարվի բոլոր սարքավորումների պահպանում, ընթացիկ նորոգում, շահագործում: Ջրասնուցումն ապահովվում է մետրոյի «Հանրապետության հրապարակ» կայարանին պատկանող h.7 խորքային պոմպից Դ-200մմ խողովակաշարով: Ջրավազանի մակերեսը կազմում է 655,15մ 2: Պոմպակայանի տարածքը 150քմ է:<br>3. 2750-ամյակի անվան և Շահումյանի արձանի մոտի շատրվանների աշխատանքային սեզոնն է ապրիլի 7-ից մինչև նոյեմբերի 1-ը, շաբաթական 1անգամ կատարվում է ջրավազանի լվացում, մաքրում, պխտահանում: Աշխատանքային և նախապատրաստական սեզոնի ընթացքում շահագործվելու են 1հատ 12 ՆԴՍ մակնիշի պոմպ, 1հատ 110կվտ շարժիչ օրեկան 12 ժամ: Շատրվանների ընդհանուր հզորությունը կազմում է 150կվտ/ժամ, էլ.սնուցումը ապահովվում է 2գիծ ԱՎՎԳ 4x120մմ2 550գծմ ընդհանուր երկարությամբ մալուխով: Ամբողջ տարվա ընթացքում պետք է կատարվի ամբողջ սարքավորումների, խողովակաշարերի պահպանում, ընթացիկ նորոգում, շահագործում: Ջրասնուցումն ապահովվում է ԷՑՎ12-160 պոմպով: Ջրավազանի մակերեսը կազմում է 1621,6քմ: Պոմպակայանի տարածքը 80քմ է: Իրականացվելու են բետոնե հատակ և պատերի, եզրահան քարերի բետոնացման վերանորոգման և ներկման աշխատանքներ:<br>4. «Կարապի լիճ» ջրավազանի աշխատանքային սեզոնն է ապրիլի 7-ից մինչև նոյեմբերի 1-ը, շաբաթական 1անգամ կատարվում է ջրավազանի լվացում, մաքրում, պխտահանում: Աշխատանքային և նախապատրաստական սեզոնի ընթացքում շահագործվելու են 1հատ ԷՑՎ10 մակնիշի խորքային պոմպ օրեկան 8 ժամ: Ջրավազանի ընդհանուր հզորությունը կազմում է 50կվտ/ժամ, էլ.սնուցումը ապահովվում է 1գիծ ԱՎՎԳ 4x50մմ2 100գծմ ընդհանուր երկարությամբ մալուխով: | | | | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | Իրականացվելու է «Կարապի լիճ» ցրավազանի հարակից տարածքի լուսավորությունն 17 սյուներով, 34 հատ 250վտ-անոց գազահալոգենային լամպերով: Ամբողջ տարվա ընթացքում պետք է կատարվի պոմպակայանում գտնվող սարքավորումների և խողովակների պահպանում, ընթացիկ նորոգում, շահագործում: Ջրավազանի մակերեսը կազմում է 2490քմ: Պոմպակայանի տարածքը 20քմ է: Իրականացվելու է խողովակաշարերի ներկման, քեռնե հասակի վերանորոգման աշխատանքներ:<br>5. Վ. Դավթյանի անվան այգու շատրվանների աշխատանքային սեզոնն է ապրիլի 7-ից մինչև նոյեմբերի 1-ը, շաբաթական 1անգամ կատարվում է 25քմ մակերեսով ցրավազանի լվացում, մաքրում, պահպանում: Աշխատանքային և նախապատրաստական սեզոնի ընթացքում շահագործվելու են 3հատ 3կվտ հզորությամբ պոմպ օրեկան 6 ժամ:<br>6. Օղակաձև զբոսայգու 3-րդ հատվածի (Կամերային երաժշտության տան մոտ) շատրվանների աշխատանքային սեզոնն է ապրիլի 7-ից մինչև նոյեմբերի 1-ը, շաբաթական 1անգամ կատարվում է ցրավազանի լվացում, մաքրում, պահպանում: Աշխատանքային և նախապատրաստական սեզոնի ընթացքում շահագործվելու են 1հատ ԷՑՎ10 մակնիշի խորքային պոմպ օրեկան 12 ժամ: Շատրվանների ընդհանուր հզորությունը կազմում է 35կվտ/ժամ, էլ.սնուցումը ապահովվում է 1գիծ ԱՎՎԳ 4x95մմ2 250գծմ ընդհանուր երկարությամբ մալուխով: Ամբողջ տարվա ընթացքում պետք է կատարվի պոմպակայանում գտնվող սարքավորումների և խողովակների պահպանում, ընթացիկ նորոգում, շահագործում: Ցրավազանի մակերեսը կազմում է 169,57քմ: Պոմպակայանի տարածքը 4քմ: Գարնան նախապատրաստական աշխատանքների ընթացքում իրականացվելու են քեռնեցման աշխատանքներ:<br>7. Օղակաձև զբոսայգու 4-րդ հատվածի (Տնտեսագիտական համալսարանի մոտ) շատրվանների աշխատանքային սեզոնն է ապրիլի 7-ից մինչև նոյեմբերի 1-ը, շաբաթական 1անգամ կատարվում է ցրավազանի լվացում, մաքրում, պահպանում: Աշխատանքային և նախապատրաստական սեզոնի ընթացքում շահագործվելու են 1հատ 8Կ12 մակնիշի պոմպ օրեկան 6 ժամ, շարժիչը 37կվտ հզորությամբ: Շատրվանների ընդհանուր հզորությունը կազմում է 70կվտ/ժամ, էլ.սնուցումը ապահովվում է 4գիծ ԱՎՎԳ 4x70մմ2 250գծմ ընդհանուր երկարությամբ մալուխով: Ամբողջ տարվա | | | | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | ընթացքում պետք է կատարվի պոմպակայանում գտնվող սարքավորումների և խողովակների պահպանում, ընթացիկ նորոգում, շահագործում: Ջրասնուցումը կատարվում է Կամերային երաժշտության տան մոտ գտնվող շատրվանի պոմպակայանից: Ջրավազանի մակերեսը կազմում է 275,4քմ: Պոմպակայանի տարածքը 20քմ: Գարնան նախապատրաստական աշխատանքների ընթացքում իրականացվելու են բազալտե քարերի վերականգնման աշխատանքներ:<br>8. Օղակաձև զբոսայգու 4-րդ հատվածի խճանկարային ջրավազանի աշխատանքային սեզոնն է ապրիլի 7-ից մինչև նոյեմբերի 1-ը, շաբաթական 1անգամ կատարվում է ջրավազանի լվացում, մաքրում, ախտահանում: Ջրասնուցումը կատարվում է Կամերային երաժշտության տան մոտ գտնվող շատրվանի պոմպակայանից: Ջրավազանի 275,4քմ:<br>9. Օղակաձև զբոսայգու 5-րդ հատվածի մեծ գեղարվեստական շատրվանի աշխատանքային սեզոնն է ապրիլի 7-ից մինչև նոյեմբերի 1-ը, շաբաթական 1անգամ կատարվում է ջրավազանի լվացում, մաքրում, ախտահանում: Աշխատանքային և նախապատրաստական սեզոնի ընթացքում շահագործվելու են 1հատ 8ՆԴՍ մակնիշի պոմպ, շարժիչը 250կվտ հզորությամբ օրեկան 6 ժամ: Շատրվանների էլ.սնուցումն ապահովվում է 2գիծ ԱՎՎԳ 4x185մմ2 500գծմ և 1գիծ ԱԱՇՎ 4x120մմ2 250գծմ ընդհանուր երկարությամբ մալուխով: Ամբողջ տարվա ընթացքում պետք է կատարվի պոմպակայանում գտնվող սարքավորումների և խողովակների պահպանում, ընթացիկ նորոգում, շահագործում: Ջրասնուցումը կատարվում է ԷՑՎ10 խորքային պոմպից: Ջրավազանի մակերեսը կազմում է 361քմ: Պոմպակայանի տարածքը 150քմ: Գարնան նախապատրաստական աշխատանքների ընթացքում իրականացվելու են ներկման աշխատանքներ:<br>10. Օղակաձև զբոսայգու 5-րդ հատվածի ջրավազանի աշխատանքային սեզոնն է ապրիլի 7-ից մինչև նոյեմբերի 1-ը, շաբաթական 1անգամ կատարվում է ջրավազանի լվացում, մաքրում, ախտահանում: Ջրասնուցումը կատարվում է մեծ գեղարվեստական շատրվանի խորքային պոմպից: Ջրավազանի մակերեսը 1200քմ է: Գարնան նախապատրաստական աշխատանքների ընթացքում իրականացվելու են հատակի և պատերի բետոնացման աշխատանքներ, խողովակաշարերի ներկում:<br>11. Սասունցի Դավթի արձանի ջրավազանի աշխատանքային սեզոնն է ապրիլի 7-ից մինչև նոյեմբերի 1-ը, | | | | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | շաբաթական 1անգամ կատարվում է ջրավազանի լվացում, մաքրում, պլստահանում: Ամբողջ տարվա ընթացքում պետք է կատարվի խողովակաշարերի պահպանում, ընթացիկ նորոգում, շահագործում: Ջրասնուցումը կատարվում է խմելու ջրով Դ-25մմ խողովակով: Շահագործումը կատարվում է 1կվս/ժամ հզորությամբ պոմպով օրեկան 24 ժամ, էլ.սնուցումը կատարվում է 2x4մմ2 250գծմ երկարությամբ մալուխով: Ջրավազանի մակերեսը 459,72քմ է: Վերականգնվելու է ջրավազանի լուսավորությունը:<br>12. Հրազդան գետի 21 քարաժների շուրջօրյա հսկում, 21 ջրարգելակների միջոցով ջրի հոսքի փոխխում, ջրարգելակների հասվածի ջրի հոսքի ապահովում անհրաժեշտության դեպքում նաև մաքրում բերվածքներից: Ջրարգելակների ընթացիկ նորոգում: Աշխատանքները կատարվում են ամբողջ տարվա ընթացքում: Մակերեսը՝ 24204քմ:<br>13. Երևանյան ջրամբարում կատարվում են 6ջրարգելակների շուրջօրյա շահագործում, պահպանում: Կատարվում է մեխանիզմ-սարքավորումների ընթացիկ նորոգում: Ջրարգելակներից միջոցով կատարվում է ջրի հոսքի կարգավորում, լճի մակարդակի պահպանում: Էլ.սնուցումը կատարվում է 900գծմ ընդհանուր երկարությամբ 2 գիծ ԱՎՎԳ 4x50մմ2 մալուխով: Հիմնական 4 ջրարգելակները շահագործվելու են այծիկային կռունկով և 2հատ 22կվս/ժամ հզորությամբ շարժիչով: Ջրամբարում ջրի առավելագույն մակարդակը պետք է չգերազանցի 900,2նիշը: Վարարումների սեզոնի ընթացքում պետք է ապահովվի պահուստային ծավալ հեղեղաջրերը ընդունելու և ամբարելու համար, ջրի ելքերի նվազեցմամբ հնարավորինս կրճատվի Երևանյան ջրամբարից ներքև ընկած Հրազդան գետի հարակից տարածքների ջրածածկումը: Ոռոգման սեզոնի ընթացքում «Մասիս» և «Էջմիածին» ՋՕ ընկերությունները պետք է ապահովվեն պահանջվող քանակի ջրով: Ոռոգման ջրի քանակը ներկայացվում է «Սևան-Հրազդանյան ջրառ» ՓԲԸ-ի կողմից: Պլանային կանխարգելիչ աշխատանքները կատարվում են Արտակարգ իրավիճակների վարչության և «Սևան-Հրազդանյան ջրառ» ՓԲԸ-ի հետ համատեղ: Լճի մակերեսը կազմում է 650000քմ: Երևանյան ջրամբարի ընդհանուր շահագործումն ու պահպանումն իրականացվում է համաձայն ՀՀ Կառավարության որոշումների:<br>14. «Հաղթանակ» զբոսայգու արհեստական լճի մակերեսային | | | | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | մաքրում, ջրամաքրման ապահովում: Մակերեսը` 10862,8քմ<br>:<br>15. Գետառ գետի հունի հսքի ապահովում թունելային մուտքերի հատվածներում, հսկում, անհրաժեշտության դեպքում նաև աղբի հեռացման և/կամ մաքրման աշխատանքների իրականացում: Բուսաբանական այգու և Շենգավիթ համայնքի Ներքին գործերի բաժանմունքի մոտ գտնվող 4 ջրարգելակների կարգավորում, շահագործում, պահպանում, ընթացիկ նորոգում: Մակերեսը` 55400քմ:<br>16. Ջրվեժ գետի հունի հսքի ապահովում թունելային մուտքերի հատվածներում, հսկում, անհրաժեշտության դեպքում նաև աղբի հեռացման և/կամ մաքրման աշխատանքների իրականացում: Մակերեսը` 200000քմ:<br>17. Ողջաբերդ գետի հունի հսքի ապահովում թունելային մուտքերի հատվածներում, հսկում, անհրաժեշտության դեպքում նաև աղբի հեռացման և/կամ մաքրման աշխատանքների իրականացում: Մակերեսը` 153000քմ:<br>18. Օղակաձև զբոսայգու 6-րդ հատվածի № 4 ջրավազանի աշխատանքային սեզոնն է ապրիլի 7-ից մինչև նոյեմբերի 1-ը, շաբաթական 1անգամ կատարվում է ջրավազանի լվացում, մաքրում, ախտահանում: Ջրամանուցումը մշտական է: Ջրավազանի մակերեսը 2075քմ է: Յատակների վերանորոգում, խողովակների ներկում:<br>19. Օղակաձև զբոսայգու 6-րդ հատվածի № 5 ջրավազանի աշխատանքային սեզոնն է ապրիլի 7-ից մինչև նոյեմբերի 1-ը, շաբաթական 1անգամ կատարվում է ջրավազանի լվացում, մաքրում, ախտահանում: Ջրամանուցումը մշտական է: Ջրավազանի մակերեսը 1837քմ է: Յատակների վերանորոգում, խողովակների ներկում:<br>20. Նոր Նորքի գեղարվեստական շատրվանի աշխատանքային սեզոնն է ապրիլի 7-ից մինչև նոյեմբերի 1-ը, շաբաթական 1անգամ կատարվում է ջրավազանի լվացում, մաքրում, ախտահանում: Աշխատանքային և նախապատրաստական սեզոնի ընթացքում շահագործվելու են 2հատ 8կ12 մակնիշի պոմպ, 2հատ 37կվտ հզորությամբ շարժիչ օրեկան 6 ժամ: Շատրվանների էլ. սնուցումն ապահովվում է 1գիծ ԱՎՎԳ 4x150մմ2 250գծմ երկարությամբ մալուխով: Ամբողջ տարվա ընթացքում պետք է կատարվի պոմպակայանում գտնվող սարքավորումների և խողովակների պահպանում, ընթացիկ նորոգում, շահագործում: Ջրամանուցումը կատարվում է խմելու ջրով Դ-50մմ խողովակով: Ջրավազանի մակերեսը | | | | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | կազմում է 600քմ: Պոմպակայանի տարածքը 30քմ: Յատակի և երկաթային հատվածների ներկում:<br>21. «Կարապի լիճ» սահադաշտը գործում է դեկտեմբերի 1-ից մինչև մարտի 1-ը ամեն օր, աշխատանքային ժամերն են 11.00-ից մինչև 23.00, տեխնիկական սպասարկման ժամը 6.00-ից մինչև 18.00: Աշխատանքային սեզոնի ընթացքում պետք է ապահովվի հաճախորդների պատշաճ սպասարկումը, չմուշկների ապահովում, անվտանգություն, բիոզուգարաններ, ցանկության դեպքում ուսուցում, ապահովում սառեցնող սարքավորումների շուրջօրյա սպասարկում (սահադաշտի 1000քմ մակերեսի ամենօրյա մաքրում, օրական 2անգամ սառույցի շերտի պատրաստում, սահադաշտը սպասարկող 2000քմ տարածքների և շինությունների պահպանում, մաքրում, էլ.սնուցման համակարգերի և սահադաշտի ընթացիկ վերանորոգում: Սահադաշտի գույքի տարեկան 2անգամ տեղափոխում համապատասխան պահպանման համար նախատեսված տարածք և պահպանման տարծքից սահադաշտ, ինչպես նաև ապավոտելով տեղադրումը: Յաճախորդների պատշաճ սպասարկման ապահովում:<br>22. Գ.Նժդեհի անվան հրապարակի շատրվանների աշխատանքային սեզոնն է ապրիլի 7-ից մինչև նոյեմբերի 1-ը, շաբաթական 1 անգամ կատարվում է ջրավազանի լվացում, մաքրում, ախտահանում: Կատարվում են պոմպակայանի 250կվտ հզորությամբ 2 պոմպերի ստուգում և ընթացիկ վերանորոգումներ, շարժիչների սնուցող մալուխների, էլ.սարքավորումների ստուգում և ընթացիկ վերանորոգում, շատրվանի հատակի և պատերի զննում, ստուգում: Ջրավազանի 1300քմ մակերեսի լվացում, մաքրում, ախտահանում: Շատրվանները գործելու են օրեկան 4 ժամ: Իրականացվելու է եզրահան քարերի վերականգնում:<br>23. «Շողակաթ» հ/ընկերության մոտի շատրվանների աշխատանքային սեզոնն է ապրիլի 7-ից մինչև նոյեմբերի 1-ը, շաբաթական 1անգամ կատարվում է ջրավազանի լվացում, մաքրում, ախտահանում: Կատարվում են պոմպակայանի 75կվտ հզորությամբ 2պոմպերի ստուգում և ընթացիկ վերանորոգումներ, շարժիչների սնուցող մալուխների, էլ.սարքավորումների ստուգում և ընթացիկ վերանորոգում, շատրվանի հատակի և պատերի զննում, ստուգում: Ջրավազանի 1680քմ մակերեսի լվացում, մաքրում, ախտահանում: Շատրվանները գործելու են օրեկան 4 ժամ: Խողովակաշարերի | | | | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | և երկաթե հասվածների ներկում:<br>24. Երևանյան ջրամբարի շատրվանի շահագործում և պահպանում, պոմպակայանի 2հատ 55կվտ հզորությամբ պոմպերի ստուգում և ընթացիկ վերանորոգումներ, շարժիչները սնուցող մալուխների, էլ.սարքավորումների ստուգում և ընթացիկ վերանորոգում, աշխատանքային սեզոնն է ապրիլի 7-ից մինչև նոյեմբերի 1-ը: Գործելու է օրեկան 4 ժամ:<br>25. Երևանյան ջրամբարի աղբահավաք կայանի կուտակված աղբի ամենօրյա հավաքում ջրի մակերեսից լաստանավի միջոցով և տեղափոխում դեպի ափ, որից հետո ավտոկռունկով հունից բարձրացում ափ և տեղափոխում աղբավայր: Աղբահավաք կայանի ընթացիկ վերանորոգումներ աշխատանքներ:<br>26. Հանրապետական հիվանդանոցի մոտ գտնվող ջրավազանի պոմպակայանի պոմպի 18կվտ շարժիչի ընթացիկ նորոգում, ջրավազանի հատակի ու պատերի զննում, ստուգում և վերանորոգում, ջրանող և ջրահեռացնող խողովակների ընթացի վերպնորոգում, ջրավազանի 3000քմ մակերեսի մաքրում, լվացում և պահպանում: Գործելու է օրեկան 8 ժամ:<br>27. Աբովյան-Թումանյան փք. խաչմերուկում գտնվող շատրվանի պոմպակայանի պոմպի 3կվտ շարժիչի ընթացիկ նորոգում, ջրավազանի հատակի ու պատերի զննում, ստուգում և վերանորոգում, ջրանող և ջրահեռացնող խողովակների ընթացիկ վերանորոգում, ջրավազանի մակերեսի մաքրում, լվացում և պահպանում: Գործելու է օրեկան 12 ժամ:<br>28. Ազատամարտիկների 5-րդ նրբանցքի և Նոր Արեշի 22-րդ փողոցի հատման մասում գտնվող այգու շատրվանի պոմպակայանի պոմպի շարժիչի ընթացիկ նորոգում, ջրավազանի հատակի ու պատերի զննում, ստուգում և վերանորոգում, ջրանող և ջրահեռացնող խողովակների ընթացիկ վերանորոգում, ջրավազանի 20 քմ մակերեսի մաքրում, լվացում և պահպանում: Հատակի, պատերի և խողովակաշարերի երկաթյա հասվածների ներկման աշխատանքներ: Գործելու է օրեկան 8 ժամ:<br>29. Շիրակի փողոցի հ.հ.12, 14 շենքերի միջակայքում բակում հանգստի գոտու շատրվանի պոմպակայանի պոմպի շարժիչի ընթացիկ նորոգում, ջրավազանի հատակի ու պատերի զննում, ստուգում և վերանորոգում, ջրանող և | | | | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | ջրահեռացնող խողովակների ընթացիկ վերանորոգում, ջրավազանի 145 քմ մակերեսի մաքրում, լվացում և ախտահանում: Հատակի, պատերի և խողովակաշարերի երկաթյա հատվածների ներկման աշխատանքներ: Գործելու է օրեկան 8 ժամ:<br>30. Գլխավոր պողոտայի՝ Նալբանդյան-Հանրապետության փողոցների միջև պուրակի 145.2քմ ընդհանուր մակերեսով թվով 3 շատրվանների պահպանում, շահագործում, ընթացիկ վերանորոգում, 15 կՎտ հզորությամբ թվով 3 շարժիչների վերանորոգում, պահպանում, շահագործում, շարժիչները սնուցող մալուխների, էլ.սարքավորումների ստուգում և ընթացիկ վերանորոգում: Վերականգնվելու է լուսավորությունը: Գործելու է օրեկան 12 ժամ:<br>31. Թաթուլ Կրպեյանի անվան այգու շատրվանների շագահործում, պահպանում, ընթացիկ վերանորոգում, 2հատ 15 կՎտ հզորությամբ շարժիչների վերանորոգում, պահպանում, շահագործում, շարժիչները սնուցող մալուխների, էլ.սարքավորումների ստուգում և ընթացիկ վերանորոգում: Մակերեսը 30քմ: Խողովակաշարերի ներկման աշխատանքներ: Գործելու է օրեկան 8 ժամ:<br>32. Վահան Զատիկյանի անվան այգու շատրվանների շագահործում, պահպանում, ընթացիկ վերանորոգում՝ ներառյալ 1հատ 18 կՎտ հզորությամբ շարժիչի վերանորոգում, պահպանում, շահագործում, սնուցող մալուխների, էլ.սարքավորումների ստուգում և ընթացիկ վերանորոգում: Մակերեսը 140քմ: Բետոնե հատակի վերականգնում, պատերի հատակի ներկում: Գործելու է օրեկան 8 ժամ:<br>33. «Հայաստան» կինոթատրոնի մոտ գտնվող շատրվանի շագահործում, պահպանում, ընթացիկ վերանորոգում՝ ներառյալ 1հատ 20 կՎտ հզորությամբ շարժիչի վերանորոգում, պահպանում, շահագործում, սնուցող մալուխների, էլ.սարքավորումների ստուգում և ընթացիկ վերանորոգում: Մակերեսը 40քմ: Գործելու է օրեկան 12 ժամ:<br>34. Նուբարաշենի այգու շատրվանի շագահործում, պահպանում, ընթացիկ վերանորոգում՝ ներառյալ 1հատ 1.5 կՎտ հզորությամբ շարժիչի վերանորոգում, պահպանում, շահագործում, սնուցող մալուխների, էլ.սարքավորումների ստուգում և ընթացիկ վերանորոգում: Մակերեսը 28քմ: Գործելու է օրեկան 10 ժամ: | | | | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | 35. Գլխավոր պողոտայի՝ Հանրապետության-Խանջյան փողոցների միջև պուրակի 95քմ ընդհանուր մակերեսով թվով 2 շատրվանների պահպանում, շահագործում, ընթացիկ վերանորոգում, 15 կՎտ հզորությամբ թվով 2 շարժիչների վերանորոգում, պահպանում, շահագործում, շարժիչները սնուցող մալուխների, էլ. սարքավորումների ստուգում և ընթացիկ վերանորոգում: Գործելու է օրեկան 12 ժամ: | | | | |

ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԳՆՈՐԴ
Երևանի քաղաքապետարան
ք. Երևան, Արգիշտիի փ. 1
ՀՎՀՀ 02593108

Գ. Զբրյան ---------------------------------
(ստորագրություն)
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ
«Ջրային կառույցների» ՓԲԸ
ք. Երևան, Հալաբյան 31/2
«Անելիք բանկ» ՓԲԸ
Հ/Հ 11800205074800
ՀՀՎՀ 00009812

Ա. Տեր-Թովմասյան----------------------------------
(ստորագրություն)
Կ.Տ

«Հավելված N 2
«28» «դեկտեմբերի» 2017թ. կնքված
N «ԵՔ-ԲՄԾՁԲ-18/9» գնման պայմանագրի

| Պայմանագրի կողմ | Պատվիրատու |
|---|---|
| ____________________ | ____________________ |
| ____________________ | ____________________ |
| գտնվելու վայրը ____________ | գտնվելու վայրը ____________ |
| հհ ____________________ | հհ ____________________ |
| ____________________ | ____________________ |
| հվհհ ____________________ | հվհհ ____________________ |

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
## ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ ____________________
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «________________» 20 թ.
Պայմանագրի համարը՝ ________.
Պատվիրատուն՝ ի դեմս ____________________
Պայմանագրի կողմը՝ ի դեմս ____________________ և
Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «________________» 20 թ. կազմված՝ գնման հայտը ներկայացնելիս ներկայացուցիչ N ____ եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված ծառայությունները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

| N | Մատուցված ծառայությունների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
| | | | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Վերոհիշյալ ծառայությունների մատուցման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

| Ծառայությունը հանձնեց | Ծառայությունն ընդունեց |
|---|---|
| ____________________ | ____________________ |
| ստորագրություն | ստորագրություն |
| ____________________ | ____________________ |
| ազգանուն, անուն | ազգանուն, անուն |
| Կ.Տ. | Կ.Տ. |

Հավելված N 2.1
«28» «դեկտեմբերի» 2017թ. կնքված
N «ԵՔ-ԲՄԾՁԲ-18/9» գնման պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ________________-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և ____________-ի

Կատարողի անունը Պատվիրատուի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. ______________________-ին կնքված N ________________

պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. ________-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

| Ծառայության | | |
|---|---|---|
| անվանումը | չափման միավորը | քանակը (փաստացի) |
| | | |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց | Ընդունեց

հայտը նախագծած ներկայացուցիչ՝

________________ ________________
ազգանուն, անուն | ազգանուն, անուն

________________ ________________
ստորագրություն | ստորագրություն

ՏՈՒԺԱՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

(պայմանագրի կատարման ապահովում)

ք. Երևան «      28
»         12          2017 թ.**

«Ցրային կառույցների» ՓԲԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Արման Տեր-Թովմասյանի (նույնականացման քարտ՝ 000123729), որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա՝ (այսուհետև՝ Ընկերություն), սույնով միակողմանի սահմանում է հետևյալ տուժանքի վճարման համաձայնությունը.

## 1. Համաձայնության առարկան

1.1 Ընկերությունը մասնակցում է Երևանի քաղաքապետարան* (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից կազմակերպված՝ ԵՔ-ԲՄԾՁԲ-18/9* ծածկագրով գնման ընթացակարգին:

1.2 Որպես գնման ընթացակարգի արդյունքում կնքվելիք պայմանագրի կատարման ապահովում, Ընկերությունը Պատվիրատուին է ներկայացնում սույն տուժանքի համաձայնագիրը և կից վճարման պահանջագիրը՝ լրացված և հաստատված Ընկերության կողմից՝ համաձայն ՀՀ կենտրոնական բանկի հաստատած՝ <<Վճարահաշվարկային գործառնությունների կատարման ժամանակ կիրառվող փաստաթղթերի նվազագույն վավերապայմանների և դրանց լրացման կանոնների>>:

1.3 Ընկերության կողմից գնման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագիրը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Պատվիրատուն սույն տուժանքի համաձայնագիրը և կից վճարման պահանջագիրը (այսուհետ՝ պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագիր) ներկայացնում է Ընկերությանը սպասարկող բանկին (այսուհետ՝ Բանկ)՝ այդ մասին գրավոր տեղեկացնելով Ընկերությանը:

1.4 Բանկը պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագիրը ընդունում է կատարման՝ Պատվիրատուի կողմից սույն տուժանքի համաձայնագրի և գնման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագրի չկատարման կամ ոչ պատշաճ կատարման փաստը հաստատող փաստաթղթի բնօրինակները, որոնք նշվում են պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագրում, Բանկին տրամադրվելու դեպքում:

1.5 Պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագրում նշված գումարի վճարման հետևանքով առաջացած ռիսկերի (Ընկերության կրած վնասների) համար Բանկը պատասխանատվություն չի կրում:

1.6 Սույն համաձայնագիրը և կից պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագիրը Բանկ ներկայացնելուց հետո, Բանկից անկախ պատճառներով, տասն աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին գումարը չվճարվելու դեպքում, Պատվիրատուն չվճարման հետ կապված Ընկերության մասին տեղեկությունները փոխանցում է <<ԱՔՌԱ Քրեդիթ Ռեփորթինգ>> ՓԲԸ (Վարկային բյուրո):

## 2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Ընկերության կողմից վավերացման պահից և վավեր է Ընկերության կողմից կնքվելիք պայմանագրով ստանձնվող պարտավորությունները ողջ ծավալով կատարելու վերջին օրվան հաջորդող 10-րդ աշխատանքային օրը ներառյալ:

2.2 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

## 3. Ընկերության հասցեն, բանկային վավերապայմանները՝

«Ցրային կառույցների» ՓԲԸ
ք. Երևան, Հալաբյան 31/2
«Անելիք բանկ» ՓԲԸ
Հ/Հ 11800205074800
ՀՀՎՀ 00009812

Արման Տեր-Թովմասյան

ընկերության տնօրենի անունը, ազգանունը և ստորագրությունը

Կ.Տ

| | |
|---|---|
| 1. ՎՃԱՐՄԱՆ ՊԱՀԱՆՋԱԳԻՐ[1] N *(պայմանագրի կատարման ապահովում)* | |
| 2. Ներկայացման ամսաթիվը` "___" ___ 20___թ. | |
| 3. Ընկերություն (այսուհետ` վճարող)` «Ցրային կառույցների» ՓԲԸ | |
| 4. Վճարողի բանկը` «Ամերիաբանկ» ՓԲԸ | |
| 5. Վճարողի հաշվի համարը` 11800205074800 | |
| 6. Վճարողի ՀՎՀՀ` 00009812 | |
| 7. Վճարողի ՀԾՀ` | |
| 8. Շահառու` Երևանի քաղաքապետարան | |
| 9. Շահառուի ՀՎՀՀ` 02593108 | |
| 10.Շահառուի բանկը` Կենտրոնական գանձապետարան | |
| 11.Շահառուի հաշվի համարը /հշ.N/ 900015211429 | |
| 12.Գումարը թվերով և բառերով` 32549000 երեսուներկու միլիոն հինգ հարյուր քառասունինը հազար | |
| 13.Արժույթը (բառերով և կոդով)` ՀՀ դրամ, AMD | |
| 14.Գործարքի /վճարման/ նպատակը` պայմանագրի կատարման ապահովում | |
| 15.Պայմանագրի ծածկագիրը`«ԵՔ-ԲՄԾՁԲ-18/9» | |
| 16.Փաստաթղթերի անվանումը, դրանց համարները, տրամադրման պայմանը 17. կից`--- էջ | |
| 19.ա.Շահառուի ստորագրությունները<br>/___________/<br>/___________/<br>19.բ<br>Կ.Տ. | 18.ա. Վճարողի ստորագրությունները`<br>/___________/<br>/___________/<br>18.բ.<br>Կ.Տ. |
| Կատարված է շահառուի բանկի կողմից<br>20.ա.<br>/___________/<br>/ստորագրություն/<br>20.բ.<br>Կ.Տ.<br>"___" ___ 20___ թ. | Կատարված է վճարողի բանկի կողմից<br>21.ա.<br>/___________/<br>/ստորագրություն/<br>21.բ.<br>Կ.Տ.<br>22.Կատարման ամսաթիվը` "___" ___ 20___թ. |

[1] *Վճարման պահանջագիրը լրացվում է համաձայն սույն հրավերով սահմանված «Վճարման պահանջագրի պարտադիր վավերապայմանների և լրացման կարգի»:*